

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական
համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 2018 թվականի

հունիսի 3-ի նիստում (արձանագրություն N34)

Խորհրդի նախագահի ղեկավարի պարտականություններ կատարող

Ե. Սերոբյան



Կ Ա Ր Գ

**«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ
ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ, ՕԺԱՆԴԱԿՄԱՆ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը կանոնակարգում է «Շիրակի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) ուսանողների գիտակրթական, սոցիալ-մշակութային կարիքների մշտադիտարկման, ուսումնասիրման, բացահայտման և դրանց բավարարման գործընթացները՝ միտված որակյալ կրթական միջավայրի ապահովմանը:

1.2. Ուսանողների կարիքների վերհանման և դրանց հնարավոր լուծումների նպատակով Համալսարանում գործում է համագործակցային ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) համակարգ՝ բաղկացած Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժնից, դեկանատներից, ամբիոններից, վարչական անձնակազմից, ուսումնական խորհրդատուներից, ուսխորհրդից և «Ուսանողության ձայն»-ից (որը գործում է Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնին կից):

1.3. Սույն կարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Համալսարանի գիտական խորհրդի կողմից:

2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

2.1. Դիտարկվում են ուսանողների կարիքների երկու շրջանակ՝ ակադեմիական և սոցիալական.

2.2. Ակադեմիական կարիքների շրջանակ են ընդգրկվում ուսանողության ակադեմիական գործունեության հետ առնչվող հիմնական ուղղությունները՝

- ուսումնական գործընթացի կազմակերպում (մասնագիտական կողմնորոշում և խորհրդատվություն, ուսումնառության միջավայր, դասավանդման որակ, լրացուցիչ խորհրդատվություն),
- ուսումնառության և այլ անհրաժեշտ ռեսուրսներով ապահովվածություն և արդյունավետ կիրառում,
- ստեղծագործական հմտությունների զարգացում, հետազոտական և գիտահետազոտական գործընթացներին մասնակցություն,
- գործընթացների թափանցելիություն և ակադեմիական ազնվություն (շրջաբերման համակարգի, ուսանողների խրախուսման, պարզևատրման մեխանիզմների և այլ գործընթացների),
- բուհի վարչակազմի կողմից ուսանողությանը հնարավոր աջակցություն,
- ուսանողների արտալսարանային գործունեության կազմակերպում, օժանդակում և աջակցում:

2.3. Սոցիալական կարիքների շրջանակ են ընդգրկվում.

- կրթավճարների զեղչային համակարգի թափանցիկ և արդյունավետ կիրարկում,
- ֆինանսական ծանր կացության մեջ հայտնված ուսանողներին բուհի կողմից աջակցության տրամադրում (համակողմանի քննարկում),

- շրջանավարտների աշխատանքային զբաղվածության (կարիերայի) զարգացման և աշխատանքի տեղավորման հարցերում աջակցության տրամադրում,
- ուսանողների ներառական և սոցիալականացման հնարավորությունների ընդլայնման աշխատանքների իրականացում:

3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՉԱՆՄԱՆ ՍՈՒՔՅԵԿՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3.1. Ուսանողների կարիքների վերհանման և դրանց հնարավոր լուծումների նպատակով Համալսարանում գործող ինստիտուցոնալ համակարգում ընդգրկված յուրաքանչյուր ստորաբաժանման և աշխատակցի համար ամրագրվում է ուսանողների ընդունելության գրաֆիկ:

Նրանցից յուրաքանչյուրը, ունենալով տարբեր գործառույթներ, ի վերջո համակցում է ուսանողության ակադեմիական և սոցիալական կարիքները՝ դրանց տալով համապատասխան լուծումներ:

3.2. Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժնի աշխատակիցները ամեն աշխատանքային օր ընդունելություն են կազմակերպում և լսում ուսանողների կողմից վերհանված հարցերը:

Ակադեմիական և սոցիալական բնույթի մի շարք խնդիրների (շրջանավարտների աշխատանքի տեղավորման և աշխատանքային զբաղվածության զարգացման հարցերում աջակցության տրամադրում, ուսումնառության միջոցների ապահովվածություն, խորհրդատվության տրամադրում, ուսանողների արտալսարանային կյանքի կազմակերպում և օժանդակում և այլն) գծով առաջադրում է լուծումներ, իրականացնում է միջամտություն՝ համագործակցելով համապատասխան կառավարման մարմինների և ստորաբաժանումների հետ:

Ակադեմիական և սոցիալական բնույթի տարբեր խնդիրներ (որոնք լուծելի չեն բաժնի գործառույթների շրջանակում) բաժնի աշխատակիցներն ուղղորդում են համապատասխանաբար ուսանողական խորհուրդ, Ուսումնամեթոդական

գործընթացի կառավարման կենտրոն, Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոն, Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոն, Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոն, ֆակուլտետներ, ամբիոններ և այլ ստորաբաժանումներ՝ պարտադիր հետևելով կարգավորման ընթացքին:

- 3.3.** Դասավանդվող դասընթացների յուրացմանն ու ամրապնդմանն ուղղված, ինչպես նաև հետազոտական և գիտահետազոտական գործընթացներին մասնակցության վերաբերյալ հարցերը վերհանվում են համապատասխան ամբիոններում:

Ամբիոնների գործավարներն ամեն աշխատանքային օր հայտարարում են ուսանողների ընդունելության ժամ՝ պարզաբանելով ուսանողների ակադեմիական բնույթի հարցերն ու խնդիրները:

Ամբիոնների վարիչները ամեն աշխատանքային օր հայտարարում են ուսանողների ընդունելության ժամ, որտեղ հանդիպելով սովորողների հետ, լուծումներ են տալիս նրանց կողմից առաջ քաշված և գործավարի կողմից պարզաբանում չտրված ակադեմիական խնդիրներին:

- 3.4.** Ուսումնական գործընթացի, ուսումնառության ռեսուրսներով ապահովվածության, ակադեմիական ազնվության և գործընթացների թափանցելիության, կրթավճարների զեղչային համակարգի կիրարկման, սոցիալական ծանր կացության մեջ հայտնված ուսանողներին բուհի կողմից աջակցության տրամադրման և այլ հարցերը վերհանվում են համապատասխան ֆակուլտետներում:

Ֆակուլտետների գործավարներն ամեն աշխատանքային օր հայտարարում են ուսանողների ընդունելության ժամ՝ պարզաբանելով ուսանողների ակադեմիական և սոցիալական բնույթի հարցերն ու խնդիրները:

Ֆակուլտետների ղեկանները ամեն աշխատանքային օր հայտարարում են ուսանողների ընդունելության ժամ, որտեղ հանդիպելով սովորողների հետ, լուծումներ են տալիս նրանց կողմից առաջ քաշված և գործավարի կողմից պարզաբանում չտրված ակադեմիական և սոցիալական խնդիրներին:

- 3.5.** Յուրաքանչյուր կուրսի կցվում է ուսումնական խորհրդատու, ով ամսական երկու անգամ պարտավոր է հանդիպել համապատասխան կուրսի հետ և ապահովել հետադարձ կապ՝ վերհանված հիմնախնդիրների լուծումների մասով:
- 3.6.** Ուսանողական իրավունքների և շահերի պաշտպանության հետ կապված խնդիրները ուսանողը կարող է վերհանել ուսանողական խորհրդի միջոցով:
- 3.7.** Բուհի մյուս ստորաբաժանումները ամեն աշխատանքային օր հայտարարում են ուսանողների ընդունելության ժամ, որտեղ պարզաբանվում են ուսանողների կողմից բարձրացված այն խնդիրները (որոնք նախապես փոխանցվել են ամբիոնների, ֆակուլտետների և ուսանողների աջակցության բաժնի կողմից), որոնք լուծում չեն ստացել ամբիոններում, ֆակուլտետներում և ուսանողների աջակցության բաժնում:
- 3.8.** Ակադեմիական և սոցիալական կարիքներին վերաբերող համընդհանուր խնդիրների վերհանման և գործընթացների որակի կառավարման նպատակով Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնը հանդիպումներ և քննարկումներ է կազմակերպում կենտրոնին կից Ուսանողության ձայնի ուսանողների հետ:
Այստեղ բարձրացված համընդհանուր խնդիրները համակարգվում և ներկայացվում են համապատասխան մարմիններին՝ լուծումներ գտնելու և բարեփոխումներ իրականացնելու նպատակով:
- 3.9.** Համալսարանի ռեկտորը, պրոռեկտորները և համապատասխան ստորաբաժանումները կազմակերպում են հանդիպումներ (ուսումնական տարվա ընթացքում առնվազն վեց անգամ) ուսանողական համապատասխան համակազմերի հետ՝ ակադեմիական և սոցիալական տարբեր բնույթի հարցերի, ինչպես նաև բաց քննարկումների անցկացման նպատակով:
- 3.10.** Համալսարանի ստորաբաժանումները՝ ըստ իրենց գործառույթների, կարող են հետազոտություններ (հարցումներ, քննարկումներ, զրույց և այլն) անցկացնել՝ ուսանողների կարիքների բացահայտման նպատակով:

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐՀԱՆՎՈՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՆԵՐԿԱՑԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

4.1. Ուսանողների կողմից համապատասխան հիմնախնդիրները համապատասխան սուբյեկտներին ներկայացվում են հետևյալ ձևերով.

- ռեկտորին՝ ուսանողական համապատասխան համակազմերի հետ հանդիպումների ժամանակ, կայքի միջոցով հետադարձ կապով, ուսանողների ընդունելության ժամանակ՝ նախապես ներկայացված դիմումի համաձայն (որը լուծում չի ստացել պրոռեկտորների կողմից),
- պրոռեկտորներին՝ ուսանողական համապատասխան համակազմերի հետ հանդիպումների ժամանակ, համապատասխան կենտրոնի՝ ուսանողների ընդունելության հայտարարած ժամերին՝ նախապես ներկայացված դիմումի համաձայն (որը լուծում չի ստացել ֆակուլտետների կողմից),
- Գիտական քաղականության, որակի ապահովման և կառավարման կենտրոն, Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոն, Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոն և այլ ստորաբաժանումներ՝ ուսանողական համապատասխան համակազմերի հետ հանդիպումների ժամանակ, ուսանողների ընդունելության հայտարարած ժամերին,
- ֆակուլտետների ղեկաններին՝ ուսանողական համապատասխան համակազմերի հետ հանդիպումների ժամանակ, ուսանողների ընդունելության հայտարարած ժամերին՝ նախապես ներկայացված դիմումի համաձայն կամ ըստ գրանցման (որը լուծում չի ստացել ֆակուլտետի գործավարի կողմից),
ֆակուլտետների գործավարներին՝ ուսանողների ընդունելության հայտարարած ժամերին
- ամբիոնների վարիչներին՝ ուսանողական համապատասխան համակազմերի հետ հանդիպումների ժամանակ, ուսանողների ընդունելության հայտարարած ժամերին՝ նախապես ներկայացված

դիմումի համաձայն կամ ըստ գրանցման (որը լուծում չի ստացել ամբիոնի գործավարի կողմից),

ամբիոնների գործավարներին՝ ուսանողների ընդունելության հայտարարած ժամերին

- կուսղեկներին՝ հանդիպումների ժամանակ,
- ուսանողական խորհրդին՝ հանդիպումների ժամանակ կամ ուսխորհրդի անդամներին ու նախագահին դիմելով:

4.2. Ընդունելության ժամատախտակները (կիսամյակի կտրվածքով) փակցվում են համապատասխան ստորաբաժանումների հայտարարությունների տախտակին և տեղադրվում Համալսարանի համապատասխան կայքէջում, հայտարարության տախտակին:

4.3. Ուսանողների կողմից վերհանված խնդիրները կա՛մ պարզաբանվում են անմիջապես (ընդունելության ժամերին, քննարկումների ու հանդիպումների ժամանակ), կա՛մ 5 օրյա ժամանակահատվածում լուծումների ընթացք են ստանում, և հարցադրման հայտագրումից 15 օրվա ընթացքում տեղեկացվում է ուսանողությանը հիմնախնդրի լուծման արդյունքի վերաբերյալ:

4.4. Վերհանված հիմնախնդիրները, որոնք իրենց լուծումներով հակասություններ, բարդություններ և երկրնտրանք են պարունակում, հայտագրումից 10 օրվա ընթացքում քննարկման հարց են դառնում Համալսարանի ռեկտորատում:

4.5. Ուսանողները իրենց բարձրացրած հարցերի պատասխանները ստանում են կամ այն օղակից, որտեղ բարձրացրել են հարցը, կամ վերջինիս ուղղորդմամբ այլ օղակներից՝ նշված ժամկետներում (գրավոր կամ բանավոր):